

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****ԺԳ. - ԺԴ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱՔԵԼՈՆ**

Հին Կտակարանական գիտությունների համաձայն, Սաղմոսներու մեծագույն մասը կը պատկանին եբրայական գրականության նորագույն շրջանին, մանաւանդ Դավթի անունը կրող մօտաւորապէս 70 սաղմոսները: Սաղմոսներու մէջ ալ երկու սեմական ժողովուրդներու բաբելոնեան եւ եբրայական միտքերու, զգացումներու, ոճի, պատկերներու խիստ շատ նմանութիւններ կան:

Եբրայական սաղմոսներուն հեղինակները պերճախօս գիծերով կը ներկայացնեն մեղաւորին վիճակը, իրենց անձին օրինակով, իրենց զգացած մարմնական եւ հոգեկան ցաւերով ու վիշտերով: Անոնց ամբողջ էութիւնը կ'ուսանի: Մեղաց խորունկ տիղմի մէջ ընկղմած անոր սգակիրներու նման տխուր կը թափառին, անապատի տատրակի կամ աղանիի նման կ'ողբան, անոնց սիրտը բարձրաձայն կը հնչէ եւ անոնց հոգին արդէն դժոխքին մէջ կը շրջի մահասարսուռ. «Ես հառաչելով յոգնեցայ. գիշերները իմ արցունքներովս անկողինս կը թրչեմ, մահիճս կը լուամ» (Սաղմ. 2. 6): Բոլոր այս զգացումներուն ու պատկերներուն կը հանդիպենք մենք բաբելոնեան սաղմոսներուն մէջ: «Ողբալով կը հառաչէ ան, ցաւատանջ հեծեծանքներով, սրտակսկիծ ցաւերով»: Գիշեր ցերեկ կ'ողբայ բաբելացի երգիչն ալ, իր ողորմած Աստուծոյն կ'աղաղակէ վայրենի կովի պէս, իր հասակը եղեգնի պէս կը ճօճի, իր սիրտը կը թռչի, անիկա արդէն մահուան ճիրաններուն մէջ է, իր դագաղը բաց եւ պատրաստ է, որդերը իրեն կը սպասեն: Մռայլ միտքերու ամփոփումն եղող Սաղմ. 22.-ը բողոք մ'է թշուառին, որ դիակի մը պէս գարշելի եղած է բոլոր իր բարեկամներուն եւ ընկերներուն եւ անոնցմէ լքուած է: Նոյն միտքերը կը կրկնուին բաբելոնեան սաղմոսի մը մէջ (IV. R. 60):

Երկու ժողովուրդներու սաղմոսներուն մէջ ալ մեծ ախորժակով կը խօսուի անձնական հակառակորդներու եւ ենթակայի դժբախտութեանց եւ թշուառութեանց վրայ հրճուող հակառակորդներու դէմ: Հին Կտակարանի սաղմոսներուն մէջ բազմաթիւ են այնպիսի հաստատածներ, որոնց մէջ արդար եւ բարեպաշտ Իսրայէլացիք կը ներկայացնեն՝ թէ ինչպէս իրենց ոխերիմ եւ անխիղճ հակառակորդները զիրենք ոչնչացնել կ'ուզեն, թէ ինչպէս անոնք կը խայտան երբ իրենք իյնան կամ վնասուին: Այսպիսի սաղմոս մ'է ԽԱ., որուն 10-րդ տան մէջ Սաղմոսերգուն կ'ըսէ. «Սակայն, ո՛վ Տէր, դուն ողորմէ ինծի եւ վերականգնէ զիս, եւ ես փոխարէնը տամ անոնց»: Բանաստեղծին կամ Սաղմոսերգուին այս հակառակորդները պէտք է խայտառակուին եւ նախատինքով եւ ամօթով հարուածուին. «Թող ամչնան եւ խայտառակուին անոնք ամէնքն ալ, որ իմ թշուառութեանս վրայ կը խնդան» (Սաղմ. 136. 26), «Վասն զի ամէն նեղութենէ զիս փրկեց եւ իմ աչքս թշնամիներուս կորուստը տեսաւ» (Սաղմ. 57. 7): Նոյն միտքերը կը գտնենք Իսղաք աստուածուհիին ընծայուած ապաշխարութեան սաղմոսի մը մէջ. «Ո՛րքան ատեն, ո՛վ երկինքի տիրապետուհի, իմ հակառակորդներս իրենց հայեացքը իմ վրայ պիտի սեւեռեն եւ ստախօսութեամբ ու նենգութեամբ շարիք դարբնեն...» եւ Նէպօ աստուծոյն ուղղուած աղօթք մը կ'ըսէ. «Ես քու փառքդ կը հռչակեմ, ո՛վ Նէպօ, բոլոր մեծ աստուածներէն առաջ, իմ բազմաթիւ թշնամիներս չկրցան ինծի վնասել»:

Բաբելոնեան սաղմոսներուն արժէքը շատ աւելի կը բարձրանայ, եթէ մենք նկատի առնենք՝ որ անոնք պայծառ լոյս կը սփռեն բաբելացւոց եւ ասորիներու կրօնա-բարոյական ըմբռնումներուն վրայ: Ինչպէս որ քրիստոնէութեան բարոյականը պէտք չէ հանենք Նափոլէոնի մը կամ Կարոլոս Մեծի մը պատերազմներու նկարագրութենէն, նոյնպէս ալ բաբելացւոց եւ ասորիներու բարոյականը պէտք չէ որոնենք այդ երկու նախաքրիստոնէական ազգերու կռիւներուն մէջ: Ով որ լրջօրէն կ'ուզէ իսրայէլացւոց բարոյական սկզբմունքները, անոնց աստուածութեան եւ անոր առանձնայատկութեանց մասին ունեցած գաղափարներն, մարդու եւ Աստուծոյ յարաբերութիւնը ճանչնալ, ան պէտք է անպայման կերպով ուսումնասիրէ ասորա-բաբելական կրօնական եւ խրատական գրականութիւնը: Մինչեւ օրս շատ քիչեր այս նեղութիւնը յանձն առած են, եւ Փրօֆ. Տէլիշ այդ սակաւաթիւ գիտնականներու շարքին կը պատկանի: Հետեւինք իրեն: Հին պատմաբանութիւնը բոլորովին սխալ գաղափար տուած է, կ'ըսէ, բաբելացւոց բարոյականութեան եւ կրօնի մասին, որոնք երկուքն ալ մինչեւ օրս դեռ կ'ազդեն մեր աշխարհայեցողութեան վրայ:

Քրիստոսէ 3000 տարի առաջ արդէն Բաբելոնի մէջ այնպիսի հաստատուն իրաւական կազմակերպութիւն մը կը տիրէր, որ այժմեան իրաւաբաններու զարմանքը կը շարժէ: Այսպիսի ընկերութեան մը մէջ բնականաբար մարդկային բարոյականի արմատական սկզբմունքները հաստատ եւ անխախտելի համոզումի մը ձեւն առած էին արդէն: Մարդասպանութիւն, ուրիշներու կիներու յափշտակութիւն, գողութիւն բարոյապէս արգիւտած էին, ինչպէս Իսրայէլի մէջ: Համմուրապիի օրէնքներուն գիւտը հաստատեց Փրօֆ. Տէլիշի այս բոլոր ենթադրութիւնները: Հին Կտակարանի 6-րդ պատուիրանին դէմ մեղանշողներու համար կ'ըսուի Համմուրապիի օրէնքներուն մէջ (§ 129. a.). «Եթէ մէկու մը կիներ օտար այր մարդու հետ յարաբերութեան մէջ բռնուի, երկուքն իրար կապելով ջուր պէտք է նետել»: Գողութիւն ընողներուն քիչ բացառութեամբ մահուան պատիժ կը սահմանուի: Մարդասպաններու պատիժն ալ մահ է: 4-րդ պատուիրի կամ սուտ վկայութիւն տուողներու համար Համմուրապի կ'ըսէ. (§. 3) «Եթէ մէկը իրաւական վէճի մը միջամտէ սուտ վկայութեամբ, եւ եթէ այդ վէճը մահու եւ կեանքի խնդիր ըլլայ եւ վկան իր ըսածները չկարենայ ապացուցանել, այն ատեն սուտ վկան պէտք է սպաննուի»: Անհատներու գոյքը բաբելացիներու համար անձեռնմխելի էր օտարի մը կողմէն եւ ամենէն ծանր պատիժներ նշանակած էին գողերու եւ աւազակներու դէմ: Բաբելոնի բնակիչները կրնային հանգիստ քնանալ եւ կատարելապէս իրենց գոյքի ապահովութեան վստահութիւնն ունենալ: Ահա թէ ի՞նչ պատիժ կը տնօրինէ Համմուրապի անոնց համար (§. 7). «Եթէ մէկը արծաթ, ոսկի, գերի, գերուհի, եզ, ոչխար կամ էջ եւ կամ ուրիշ որեւէ բան գողնայ ազատէ մը կամ գերիէ մը՝ առանց վկաններու եւ պայմանագրութեան, կամ իր քով պահէ, այդ մարդը գող է եւ պէտք է սպաննուի»: Նոյնն է նաեւ ծնողքը յարգելու դէմ մեղանշողներուն պատիժն ընդհանրապէս. «Եթէ տղայ մը իր հայրը ծեծէ, անոր ձեռքը պէտք է կտրել եւլն»: Բաբելոնեան բարոյականի համար խիստ բնորոշ է հետեւեալ հատուածը, որուն մէջ Աստուծոյ պատժին ենթակայ անձի մը մասին կը հարցնեն. «Արդեօ՞ք ան հօր եւ որդիին մէջ երկպառակութիւն սերմանեց, (ապա մօր եւ դստեր եւլն), գերին շարձակե՞ց, զաստուած (Իսդար) բարկացո՞ւց, Իսդարը արհամարհե՞ց, արդեօ՞ք ան հայրը եւ մայրը արհամարհե՞ց, կամ իր մեծ եղբայրը շփրե՞ց, սուտ խօսեցա՞ւ..., իր մերձաւորին տունը մտա՞ւ, անոր կինը առեւանգե՞ց, արին թափե՞ց, գողութիւն ըրա՞ւ»: Ահա այն բոլոր յանցանքներուն շարքը, որոնց միջոցաւ կրնայ անհատ մը աստուածային պատժի արժանանալ: Բայց այս բոլոր պարգեւներուն մէջ ալ գործն է որ կը պատժուի եւ ո՛չ թէ մտքի յղացումը, զգացումը կ'արգիւտուի, ինչպէս ըրաւ

Քրիստոս. «Բայց ես ասեմ ձեզ»-ով: Արեւելքի մէջ սովորաբար կրօն եւ իրաւունք համահաւասար եղած են, այս պատճառով օրինազանցութիւնները աստուածներուն ալ հակառակ սեպուած են, եւ եթէ յանցաւորը օրինական պատիժէն որեւէ կերպով զերծեր է, աստուածային պատիժն ու բարկութիւնն հարուածեր է զայն:

Ինչպէս իսրայէլացիներու, նոյնպէս ալ բաբելացիներուն քով ճշմարտասիրութիւնը օրինական սահմաններէն դուրս ալ բաւական խոր արմատներ ձգած էր. թէպէտ այս սեմական ժողովուրդներուն քով ճշմարտասիրութեան համար առանձին վարժութիւններ չկային, ինչպէս հին պարսից քով, որոնց համար Հերոդոտոս կը պատմէ, թէ անոնք իրենց զաւակները 5-20 տարեկան հասակին մէջ 3 բաներու կը վարժեցնէին, այսինքն ձի հեծնալու, աղեղ գործածելու եւ ճշմարտասիրութեան (Ա. 136): Բաբելացիք ալ սակայն կը դատապարտեն կեղծիքն ու սուտը: Անոնց բարոյականն ալ կը պահանջէ՝ որ տրուած խոստումը կատարուի, խոստացուած պաշտպանութիւնն իրագործուի, որ բերանը սրտի ճշմարիտ թանգարանն ըլլայ եւայլն:

Հնկերական սէրը գաղափարական բարձրութեան հասաւ Իսրայէլի մէջ. «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո». թէեւ Հին Կտակարանի մէջ այդ պատուէրը իսրայէլացիք միայն իրենց ցեղակիցներու նկատմամբ կը գործադրէին (Ղեւ. ԺԹ. 18): Բրիտանական թանգարանին մէջ կան շարք մը կճաքարեր, որոնք թէպէտ դեռ թերի, բայց թանկագին նիւթեր կու տան բաբելական բարոյագիտութեան ուսումնասիրութեան համար: Մարդկային կեանքի հազարաւոր տարիներու փորձառութիւնը խտացուած է այսպիսի ասացուածքներուն մէջ. «Բերանդ շատ մի՛ բանար, շրթունքներդ պահէ՛, եթէ գրգռուած ես մի՛ խօսիր անմիջապէս, (եթէ յանկարծ խօսիս ապագային պիտի տուժես), ո՛չ, լռութեամբ հանգստացուր քու միտքդ»:

ԺԳ.

Բաբելոնեան սաղմոսներուն մէջ կը կարդանք, որ մարդ իր նմանը պէտք է սիրէ, պէտք է զայն չարհամարհէ կամ չնեղէ եւ որ Աստուծոյն հաճելի գործ մէ կարօտեալներն ու աղքատները կերակրել եւ ջուր տալ անոնց: Ո՛վ որ Համմուրապիի օրէնքները կը կարդայ, ան կը տեսնէ, որ այստեղ անհատական կեանքն ու գոյքը, ինչպէս նաեւ բարի անունը եւ գործը այնքան ազդու միջոցներով կը պաշտպանուին, որքան որ ամէն կարգի պաշտօնեաներէ բարեխիղճ եւ արդար գործունէութիւն կը պահանջուի: Միեւնոյն ժամանակ սակայն սէր, գթասրտութիւն եւ ներողամտութիւն կը գործադրուին: Հիւանդ կիներ, այրիներ եւ մանուկներ կը խնամուին ու կը պաշտպանուին. օրէնքը ներողամիտ կը գտնուի դժբախտութեան հանդիպած պարտապանին նկատմամբ: Բաբելացիներու իրենց նմաններու հանդէպ տածած սիրոյ զգացումը յաւերժացուցած է Քրիստոս իր ողորմած Սամարացիի առակով: Ինչպէս յայտնի է եւ արդէն անգամ մը յիշուեցաւ, սամարացիք՝ հին Քուժա քաղաքի Պաղեստին փոխադրուած բնակիչներն էին: Իսկ Քուժա քաղաքը Բաբելոնի մէջ կը գտնուէր: Հին Իսրայէլի մէջ ցեղական զգացումը շատ զօրեղ էր. մինչդեռ բաբելացիք այլեւայլ ազգեր իրենց ձուլելով համաշխարհային քաղաքակրթութիւն մը ստեղծեցին, որուն համար բոլոր մարդիկ հաւասար էին: Բաբելացիք այս պատճառով իսրայէլացիներու նման իրենց ցեղակիցներու եւ օտարներու մէջ բընաւ տարբերութիւն չեն դներ:

Բացի այս պետական օրէնքներէն, բաբելացիք ունէին նաեւ քահանայական պաաւելներ, աղօթքի, զոհերու, կրօնական նուիրաբերութեանց, սովորութեանց եւ ծէսերու համար: Անոնց կրօնն ալ խստիւ կը պատուիրէր «Աստուծոյ անունն ի զուր տեղ բերան

առնել», մա՛նաւանդ Անոր անունով երգնուլ: Երկիւղածութիւնը եբրայեցիին իմաստութեան սկիզբը կը համարուի, մինչ բաբելացիին առաքինութեան արմատը, «Աստուծ-մէ վախցի՛ր եւ թագաւորը յարգէ՛», բաբելոնեան առած մը, որ Սարգանաբալի մատենադարանին աղիւսներէն մէկուն վրայ գրուած էր: Այս հիմքերուն վրայ կառուցուեցաւ Բաբելոն եւ 2000 տարի շարունակ կրցաւ հին աշխարհի տիրապետութիւնն ապահովել:

Մեղֆի հետեւանքներն եւս բաբելացիներու համար այնքան ծանր էին, որքան իսրայէլացիներու համար: Ո՛չ մէկ յանցանք կամ մեղք աստուածութենէ գաղտնի կը մնայ կամ անպատիժ կը թողուի: Մեղաց հետեւանքը Աստուծոյ ցասումն է, որ մեղաւորին կը հասնի կամ հիւանդութեան, թշուառութեան եւ կամ մահուան ու կորստեան ձեւով: Այս պատիժէն խուսափելու ջանքեր կ'ընէ բաբելացի բարեպաշտը աստուծոյ բարկութիւնը իջեցնելու, անոր սիրտը առնելու փորձեր ընելով եւ կատարելապէս կը վըստահի իր աստուծոյ գթասիրութեան: Այս տրամադրութիւնները կ'արտայայտեն նաեւ Հին Կտակարանի բոլոր սաղմոսներն ու աղօթքները. այսպէս, Սաղմ. 9. 2. «Ո՛վ Եահուէ, մի՛ պատժեր զիս քու բարկութեամբ, եւ քու ցասումով մի՛ զգաստացներ զիս»: Բոլոր ասացուածքներն ու առակներն ալ անդիմադրելի տենչ մը կ'արտայայտեն Եահուէի բարեկամութիւնն ու օրհնութիւնն շահելու եւ ամէն տեսակի մարմնական պատուհասներէ զերծ մնալու համար:

«Ո՛հ տէր, իմ չարագործութիւններս շատ են, մեծ են իմ յանցանքներս ո՛վ իմ Աստուած... Ես խարխափելով փնտռեցի, բայց ո՛չ զոք կրցայ բռնել. ես լացի, բայց մարդ ինծի չմօտեցաւ. ես բարձրաձայն կ'աղաղակեմ, բայց ոչ ոք չլսեր զիս, ցաւագար, ընկճեալ եմ ես, չեմ կրնար վեր հայիլ. իմ ողորմած Աստուծոյն կը դիմեմ եւ հառաչելով, իմ աստուածուհիս ոտքերը կը համբուրեմ ես, ո՛վ տէր, մի խորտակեր քու ստրուկդ, ան, որ տիղմի ջուրերուն մէջ կը թաւալի, օգնէ՛. այն մեղքը, զոր ես գործեցի, շնորհքի փոխէ. այն ոճիրը, զոր ես գործեցի, թող քամին տանի. իմ չարութիւններս զգեստի մը պէս պատռէ. այո՛, իմ չարագործութիւններս լուծէ, եւ քու բարձրութեան հնազանդ պիտի ըլլամ: Քու սիրտդ, մօր սրտին պէս գորովագութ թող դառնայ. մօր, հօր սրտին պէս թող ըլլայ ան»:

Բնականաբար բաբելացին ալ իր ապաշխարութեան սաղմոսներուն եւ աղօթքներուն մէջ կը խնդրէ մեղաց թողութիւն կամ ներում, իր մարմինէն եւ իր տունէն հիւանդութիւնները, մահերը եւ այլ ամէն տեսակի պատուհասներն ու դժբախտութիւնները հեռացնելու կամ անոնցմէ զերծ մնալու համար: Բաբելացիք Աստուծոյ եւ մարդկանց մէջ սերտ յարաբերութիւն մը գրած են: «Մարդս աստուծոյ որդին է» ըստ բաբելացւոց: Այն Աստուածը, որուն ան իր կեանքը կը պարտի, կը մտնէ իր մարմինին մէջ իբր բարի ոգի եւ կը պաշտպանէ ու կը ղեկավարէ զայն: Ճակատագրի եւ ո՛չ մէկ հարուած կրնայ այնքան սոսկալի ըլլալ մարդու մը համար, որքան եթէ մեղաց պատճառով աստուած (կիներուն քով աստուածուհին) իր մարմինէն ելլէ: Մեղքի ամենամեծ նզովքը այս է բաբելացիներուն համար: Մարդս բացարձակապէս աստուծոյ շնորհքէն կախուած է, որովհետեւ մեր եւ աստուծոյ խորհուրդները յաճախ տարբեր են եւ ամէն ինչ որ մեզի բարի կը թուի, միշտ աստուածահաճոյ չէ:

«Երկիւղածութիւն, զոհ եւ աղօթք, շնորհք կը ծնին, կեանքը կ'աճեցնեն, մեղքը կ'ազատեն»: Աստուածութիւնները ողորմած եւ գթառատ են եւ հաճոյքով կը փրկեն զըղջացող մեղաւորը: Մա՛նաւանդ Մաբառմ, որուն միակ ձգտումն է մեռելալներ յարուցանել: Բաբելոնեան պանթէոնի այս լուսեղէն աստուածութիւնը հոգւոյ եւ մարմնոյ բժիշկ է միանգամայն: Միւս բոլոր աստուածներն ալ բարոյական զօրութիւններու մարմնացում-

ներն են: Այսպէս զոր օր, Շամաշ՝ արեւի աստուածը կը կոչուի «Թագաւոր արդարութեան»: Շամաշ արդար եւ անկաշառ դատաւորն է, ամենաթաքուն մթութիւնները կը տեսնէ եւ ինչպէս սաղմոսին մէջ կ'ըսուի «Արդարութիւն անոր առջեւ կ'երթայ եւ իրաւունք կը հետեւի անոր քայլերուն», (ՁԵ. 13) եւ կամ «Արդարութիւն եւ իրաւունք անոր գահի հիմքերն են» (ՁԵ. 2): Այսպէս ալ Մարտուֆի որդին՝ Նէպօ «Ճշմարտութեան լոյս» կ'անուանուի.

«Ով որ պահպանուած է ճշմարտութեան լուսոյ մէջ, Ան չիյնար իր թշնամիներու ժողովին մէջ»:

Վերոյիշեալներէն կը հետեւի՝ որ բաբելացիք իրապէս չաստուածներու փայտէ եւ քարէ արձանները չէին պաշտեր, այլ այն զօրութիւնները, որոց տեսանելի յիշեցնողներն էին անոնք: Բաբելացիք ալ ունէին իրենց «Սրբութիւն սրբոց»-ը (Ատիւդոն), որ փոքր չաստուածներու արձաններով լեցուն տարածութիւն մ'էր եւ ինչպէս Հին Կըտակարանի Յահուէն իր համար աթոռատեղի ընտրած էր Սողոմոնի տաճարը, այնպէս ալ բաբելեան Մարտուֆը իրեն բնակավայր եւ պաշտատեղի նշանակած էր Բաբելոնի Էսակիլա տաճարը: Աստուծոյ երկրաւոր բնակարանին մէջ մարդ ինքզինք անոր աւելի մօտ կը զգայ, այս պատճառով ինչպէս Եբրայեցին Յահուէի տաճարին սրահը փոխադրուիլ կ'ուզէ, այնպէս ալ Բաբելացին կ'աղօթէ, որ գիշերը իր քունին մէջ Էսակիլայի մէջ գտնուելու շնորհքին արժանանայ: Բաբելոնեան աստուածութեան մը արձանի թշնամիէն խլուիլը, կամ անոր տաճարին կործանումը նշան էր այդ աստուածութեան բարկութեան եւ երկինք քաշուելուն: Երբ անոր ցասումը անցնէր, կը վերադառնար իր վայրը: Հարկաւ չաստուածներու արձաններն եւ այն պզտիկ արձանները, զորս քուրմերը տաճարին մէջ շինելով հաւատացեալներուն կը ծախէին, որոշ չափով պաշտամունքի առարկայ դարձան, բայց բաբելոնեան կրօնքը այդ ժողովրդագական պաշտամունքի վրայ հիմնուած չէր եւ պաշտամունքի նման ձեւեր մենք մինչեւ օրս ալ կրնանք այլեւայլ կրօններու մէջ տեսնել դեռ:

Իսրայէլի Յահուէին պէս՝ բաբելոնեան աստուածութիւններն ալ ամենակարող, ամենագէտ եւ ամենուրէք գտնուող էութիւններ են: Անոնք ալ երկրի եւ երկինքի վրայ իրենց ուզածը կ'ընեն: Ինչպէս Յահուէի առաջ լեռները մոմի պէս կը հալին, այնպէս ալ չաստուածներու խօսքով լեռները կը կործանին: Այսպէս Մարտուֆին նուիրուած Սաղմոսի մը մէջ կը կարդանք. «Քու խօսքդ հոյակապ ուռկան մ'է, երկինքի եւ երկրի վրայ տարածուած».

Ծովի վրայ կը փռուի ան եւ ծովը ետ կը խուսափի. դաշտերուն վրայ կը նետուի ան, եւ դաշտերը կ'ողբան.

Գետերուն (?) յորձանքներուն վրայ կը ձգուի ան,

Եւ քու խօսքը, ո՛վ Մարտուֆ, կը պղտորէ ջուրերը»:

Բաբելոնի աստուածներն ալ իրենց խօսքը քամիներու եւ փոթորիկներու միջով լսելի կ'ընեն եւ մարդոց իրենց կամքը կը յայտնեն իրենց ընտրեալ միջնորդներու միջոցով:

ՏՕՔԹ. 3. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս, 1906

(Շար. 9)